ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«19» 01 2024թ. Թիվ 20-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 167-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա ստորաբաժանումներ և տարվա քննիչ ճանաչելու կարգը, պայմանները, պարգևագրերի նկարագրերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 11-ի թիվ 56-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 167-Լ հրամանի N 1 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում «հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունից,» բառերից հետո լրացնել «տնտեսական հանցագործությունների

և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունից, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունից,» բառերը.

2) հավելվածի 2-րդ կետում «ստորաբաժանումների պետերից» բառերը փոխարինել «ստորաբաժանումներից» բառով.

3) հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում «հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունը,» բառերից հետո լրացնել «տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունը, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունը,» բառերը:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ